# Ծիածան

«ԵՐԵԿՈՅԱՆ ԵՐԵՎԱՆ»-Ի ՇԱԲԱԹԱԿԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ

26 հոկտեմբեր 1995 հինգշաբթի թիվ 15


## Ձմեռ

Ձմեռն, այնուամենայնիվ, գալու է: Չգալու հնար չկա: Խիստ կլինի, թե մեղմ՝ օդերեւութաբանները դեռ չեն գուշակել: Այնուամենայնիվ, ցրտերը մնում է ցրտեր, եւ հազիվ թե որեւէ մեկը ըստ օդերեւութաբանական կանխատեսությունների ցրտեր նախապատրաստության գործեր վարի: Իսկ գործ–գործողը պուտ–պեղ փաքայնելն է՝ այս կամ այն կերպ: Կերպերից մեկը կենտրոնացված ջեռուցումն է:

# «Ով ուզենա՝ ջեռուցում կունենա»

### Հարցազրույց Երքաղխորհրդի գործկոմի ջերմային տնտեսության արտադրական միավորման տնօրեն ՌՈՒԲԵՆ ԲՈՒՂԴԱՐՅԱՆԻ հետ

*–Ի՞նչ է նշանակում ուզենալ, պարոն Բուղդարյան:*

–Կենտրոնացված ջեռուցման գոտում գտնվող բոլոր բնակելի շենքերը կարող են ջեռուցվել, եթե բնակիչները ուզենան, ցանկանան: Դա նշանակում է, որ պարտավորվում են բարեխղճորեն վճարել ջեռուցման սահմանված վարձը, նախեւառաջ մարելով անցած ձմեռվա պարտքերը:

*–Դրանք դեռ տոկո՞ս են կազմում:*

–Այն էլ ինչպիսի. այսօրվա դրությամբ մոտ 40 տոկոս կամ բացարձակ թվերով արտահայտած՝ 238 մլն դրամ, որի կեսից ավելին բաժին է ընկնում բնակիչներին: Ես համոզված եմ, սա նաեւ խնդրանք է, որ մեր սպառողները միջոցներ կհայթայթեն եւ պարտքերը կմարեն: Այլապես ձմեռը չի ների ոչ մեկին:

*–Պարոն Բուղդարյան, ուզենալը, ցանկանալը մի բան է, վճարունակությունը՝ բոլորովին այլ: Բոլորն են ջեռուցում ուզում, բայց դա բոլորի ընտանեկան բյուջեի բանը չէ:*

–Քանի դեռ ձմեռը հեռու էր, ջեռուցում ցանկացողները՛ շատ քիչ էին: Կոոպերատիվ 200 բնակելի շենքերում օգոստոսին անցկացրած մեր հարցումների արդյունքներով, ջեռուցում ցանկանում էին բնակիչների 20 տոկոսը, հիմա այդ թիվը հասել է 50–ի: Համոզված եմ օրըստօրե դա կաճի շարունակ: Բանն այն է, որ փայտով կամ նավթով բնակարանի տաքացումը ավելի

կոնտրուկցիաների պահպանման համար: Առանց ջեռուցման շենքը դատապարտված է վաղաժամ կործանման:

*–Պարոն Բուղդարյան, մի մանկապարտեզից, որը գտնվում է կենտրոնական ջեռուցման գոտում, ծնողներից փաստական դոլարի համարժեք դրամ են պահանջում սեփական ուժերով հաստատությունը տաքացնելու համար: Ի՞նչ է նշանակում դա:*

–Ես չգիտեմ՝ դա ինչ է նշանակում, բայց գիտեմ, որ ժողկրթության համակարգի հաստատությունները, համաձայն քաղաքային ժողկրթության վարչության պաշտոնական գրության, համապատասխան ֆինանսներ չունենալու պատճառով հրաժարվում են կենտրոնացված ջեռուցումից: Այդ համակարգի օբյեկտները պետք է տաքացվեն վառարաններով, միջազգային կազմակերպությունների՝ այդ նպատակով հատկացված միջոցների հաշվին: Կրկնում եմ՝ ցանկության եւ իրենց հնարավորության դեպքում դրանք էլ կարող էին ընդգրկվել մեր համակարգում: Եվ ոչ միայն դրանք: Առողջապահական օբյեկտներն, օրինակ, ցանկություն ունեն օգտվել կենտրոնացված ջեռուցումից: Բայց նրանց տեխնիկական հնարավորությունները այնքան էլ նպաստավոր չեն: Նկատի ունեմ ջեռուցման ներքին ցանցի վիճակը: Մենք պատրաստ ենք օգնել այդ հարցում:

*–Եվ, վերջապես, վարձավճարների չափի մասին...*

## Նոր թերթ սփյուռքում

# Ապագա քեզ՝ «Ապագայ»

*Իրանահայ հասարակական, քաղաքական, մշակութային կյանքում վերջերս արժանահիշատակ իրադարձություն գրանցվեց. լույս աշխարհ եկավ եւս մի նոր պարբերական, որի անունն է «Ապագայ»:*

*«Ապագայ»-ն լուրջ խնդիրների, ծրագրերի է հավակնում եւ դրանց ցերնպատակը՝ «Լաւապէս ըմբռնելով ներկայ ժամանակների հրամայականը, թերթս կպատկանի ողջ իրանահայութեան, այդու միասնականութեան զաղտր ու ներդաշնակ գաղափարի ջատագովութեամբ համայնքս առաջնորդելու է դէպի մէկ ազգ, մէկ եկեղեցի հովանու ներքոյ կազմակերպուելու համար»-կարդում ենք խմբագրականում:*

*Մեծ, հայրենանվեր գաղափարի երդում է սա: Թող որ «Ապագայ»-ի ապագան հաստատ լինի՝ հանուն մեկ ազգ, մեկ հայրենիք, մեկ դավանանք գաղափարի ջատագովության:*

*«Երեկոյան Երեւան» «Ծիածան»*

## Այց խմբագրություն



–1991 թվականից բանտում մեկ ուրիշ բանտարկյալի խորհրդով ու աւտույչությամբ Վարուժան Կարապետյանն սկսեց նկարել սովորել եւ առաջին գործերը նվիրեց պարիններու իր երազներին՝ Հայաստանի անկախությանը, որի մասին լուրը, ցավոք, տպայավ օրար բանտի ճաղերի ետեւեն: Անշուշտ, մոր համար մեծ ցավ է ասիկա, բայց ես Վարուժանին մայրն եմ, եւ ցավս միայն նրա անմեղությունն է, այլապես դատավարության ընթացքին դատավորը եարցրեր է, թե.

–Չե՞ք զղջար չեք արարքին համար:

–Իսկ թուրքը զղջացե՞ր է մեր միլիոն ու կես զոհերուն համար,–պատասխաներ է Վարուժանը:

# Մայրը խոսեց...

Բանտարկության դատապարտված Վարուժան Կարապետյանի մայրը՝ լոսանջելեսցի տիկին Արշալույս Կարապետյանն այսպես բացեց իր սիրտը

–Երրորդ անգամ է, որ գտնվում եմ Հայաստանում, այցիս հիմնական նպատակն է թերթերու, ռադիոյի, հեռուստեսիլի միջոցով, ինչու չէ նկարներ ի ցուցադրության՝ բացահայտելու արդարությունը, լուսաբանելու ժողովուրդը Վարուժանի դատավարության խնդրո շուրջը, որպեսզի կարողանամ համախմբել Հայաստան–Սփյուռք համատեղ աշխատանքը, որ